

10766

Alnethyline
cinnamomea

ЗКРОН
9-83

1927

52

9

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՍԵՐԻԱ

ՊԻՈՆԵՐՆԵՐՆ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Թարգմ. Ա. Խ.

ՅԿԻՕՆ

Զ-83

ՏԱԿԱՆ ՀՐԱՑԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927

24 SEP 2006

1 DEC 2009

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՍԵՐԻԱ

Հ 107

-83

Այ

32957

3606

ՊԻՈՆԵՐՆԵՐՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Թարգմ. Վ. Ռ.



Ա. Զորին

ՊԻՌՆԵՐՆԵՐՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ*.

ՄԱՆԿԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ
ՎԵՐՁԻՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ.

Վերջին տարիներում, հեղափոխական շարժման աշխատացման ու կոմկուսակցությունների ու կոմիերիտմիության մասսայական աշխատանքի ծավալման հետ միասին Արևմտյան Յեվրոպակի, Աժերիկայի ու Արևելքի խոշորագույն յերկըրներում մանկական հեղափոխական կազմակերպությունները նույնպես զարգանում երին վերընթաց գծով:

Այսպես, որինակ, յեթե աչքի անցկացնենք մանկական կազմակերպությունների միայն քանակական աճումը (չնայած և այս չի հանդիսանում ընդհանրապես կառիտալիստական յերկըրնե-

* Մանկական կոմմ. միությունների գեկագործների Միջազգային ՈՒ կոնֆերենցիայի ամփոփումների ասթիվ:

րի կազմակերպության ընդհանուր աճման ցուցադրական կողմը), ապա Անգլիայի մանկական միությունը 1925 - 26 թ.թ. ընթացքում (գլխավորապես գործադրության մասնակ) աճեց, իր անդամների թիվը 300-ից հասցնելով մինչև 1000, գերազանական Պատանի Սպարտակյանների միությունը՝ 8000-ից մինչև 14,000, ամերիկան մանկական միությունը՝ 1500-ից մինչև 3000։ Սրանից բացի, այս տարիների ընթացքում յերևան յեկան բոլորովին նոր մանկական կազմակերպություններ Ավտորիալում, Լեհաստանում, Զեխո-Սլովակիայում, Արգենտինայում, Ուրուգվայում, Չիլիում, Մեքսիկայում, Ավստրալիայում ու Զինաստանում, ընդ վորում վերջինիս մեջ պիոներների թիվը արդեն 10,000-ից ավելի յեւ։

Միայն Սկանդինավյան լերկրներում, նույնպես և Ֆրանսիայում, մանկական կոմմունիստական խմբակները փաստապես բոլորովին չեցին զարգանում, ինչ վոր կապված եր այդ յերկրների (հատկապես Սկանդինավյան յերկրների) ընդհանուր քաղաքական դրության հետ։

Մեր մանկական արտասահմանյան կազմակերպությունների քաղաքական ակտիվությունը, անկառած, այս տարիների ընթացքում բարձրացել եւ կարևորագույն սոցիալական բաղխումներին (Անգլիա, Գերմանիա, Ամերիկա, Չինաս-

տան) մանկական կոմմունիստական միություններն ամենաակտիվ կերպով մասնակցում ելին։

Արևելքում՝ թե քաղաքներում և թե գյուղում, շարունակվում եւ փոքր հասակից սկսած յերեխաների անորինակ շահագործումը։ Իրենց ծանր դրությունից վոչ մի յելք չտեսնելով՝ Զինաստանի բանվորների յերեխաները տարերայնորեն կազմակերպում են գործադրուներ, մեծ տենչով ձգտում են կոմիերիտականների կազմակերպած պիոներական գործարանային կոլեկտիվները, հապարտությամբ կրում են իրենց կրծքին կարմիր լաթեր (վզկապների համար միջոցներ չունեն։)

Ինդոնեզիայի յերեխաներն, ապստամբությունից առաջ և հետո, յերգում ելին հեղափոխական յերգեր, չնայած հալածանքներին, ուղղում ելին իմանալ, թե ինչպես եւ ապրել ու պայքարել լէնինը։

ԻՆՉ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՅԻՆ ԴՐՎԱՌ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ
ԱՌԱՋ.

1927 թ. փետրվարի 20 - 25-ը Բերլինում կայացած մանկական կոմմունիստական շարժման ղեկավարների Միջազգակին III կոնֆերենցիայի գլխավոր խնդիրն եր՝ մշակել կարևորա-

գույն յերկրների մանկական կոմմունիստական միությունների փորձի հիման վրա նրանց պայքարի ու աշխատանքի մի շարք գործնական հարցերը, յենելով այն ընդհանուր խնդիրներից, վոր դրել եյին դեռ Մոսկվայի Միջազգային II կոնֆերենցիան և ԿԻՄ-ի կենտրոնակոմի վերջին յերկու պլենումը:

Միենույն ժամանակ միջազգային մանկական շարժման զարգացումն առաջ քաշեց մի շարք նոր հարցեր, վորոնցից յերկուսը – հասակավոր աշխատավորների կողմից յերեխաների պայքարին ցույց տրվող ոգնության մասին յեվ յերեխաների հակառակորդ կազմակերպությունների մասին – կոնֆերենցիայում նույնպես մանրամասն քննության յենթարկվեցին:

Բերլինի կոնֆերենցիան արդեն ընդհուպ մոտեցավ յերեխաների մեջ կատարվող կոմմունիստական աշխատանքի բոլոր մեթոդական հարցերին ու գլխավոր ուշադրությունը դարձրեց ստորին կազմակերպությունների – բջիջների ու խմբակների աշխատանքի հարցերի մշակման վրա:

Այդ խնդիրները հեշտացել եյին նրանով, վոր II կոնֆերենցիայից իվեր (1925 թ. սեպտեմբեր) մանկական կոմմունիստական բանակի ջոկատները կոմյերիտմիության և ամբողջ ԿԻՄ-ի

ղեկավարությամբ նշանակալի չափով աճել եյին, ամրացել, առաջին իրական քայլերն արել մասսայական աշխատանքի ուղղով:

Այնպիսի յերկրների, ինչպես Անգլիան, Գերմանիան, Ամերիկան (Միացյալ Նահանգներ ու Հարավային Ամերիկա), Չինաստանը և մասսամբ ել Չեխո-Սլովակիան, Ֆրանսիան ու Ավստրիան, մանկական կոմմունիստական միությունները լուրջ աշխատանք են կատարել, նշանակալի չափով աշխատավորել իրենց գործունեյությունը, ցուց տվել, վոր նրանք կարողանում են արդեն հաջողությամբ մասնակցել աշխատավորների ընդհանուր պայքարին:

Միենույն ժամանակ այդ մանկական կոմմունիստական միությունների մեծամասնությունը շարունակում եր քանակապես աճել, ամրացնել կազմակերպչորեն ձեռք բերած հաջողությունները:

Միջազգային ղեկավարությունը նույնպես ամրանում եր ու լավանում, ավելի կոնկրետ դառնում, ինչպես այդ նշեց III կոնֆերենցիան Միջազգային Մանկական Բյուրոյի ղեկուցման առթիվ: Բայց միջազգային մանկական շարժման զարգացման մեջ, այս դրական մոմենտների կողքին, կոնֆերենցիան հանդիպեց մի շարք թերությունների ու սխալների զանազան յերկրներում:

Ամենից առաջ այնպիսի յերկրների մանկա-
կան կազմակերպությունները, ինչպես Շվեդիան,
Նորվեգիան, Շվեյցարիան, Դանիան, Հոլլանդիան
ու մասամբ ել Ֆինլանդիան, ալդ շրջանում շատ
քիչ բան եյին արել, վորպեսզի Ա կոնֆերենցիա-
յի վճիռները դպրոցական բջիջների ու ընդհան-
րապես մասսայական աշխատանքի անցման մա-
սին իրոք գործնականորեն կենսագործեն:

Այդ յերկրների մանկական խմբակների աշ-
խատանքը դեռ կրում է ինքնամփոփի կուլտուրական
աշխատանքի ընույթ, քիչ ե կապված բանվոր դա-
սակարգի պայքարի հետ, համարյա բոլորովին չի
շոշափում յերեխաների տնտեսական կարիքները:

Յերկրների մեծ մասի մանկական կոմմ.
միությունների աշխատանքում գերակշում են
զանազան կամպանիաները, վոր ընդգրկում են
ամենաընդհանուր քաղաքական հարցերը, մինչ-
դեռ յերեխաների տնտեսական, կուլտուրական
ու քաղաքական պահանջները բավարարող ամե-
նորյա աշխատանքը դեռ բավական թույլ հիմքի
վրա յեր դրված:

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ.

Արեմտյան Յեվրոպայի խոշորագույն յերկր-
ներում ալժմ լայնորեն ծավալվում ե կապիտա-
լի հարձակումը վոչ միայն ընդհանրապես բան-

վոր դասակարգի, այլև նրա աճող սերնդի դեմ,
նրա նորմալ զարգացման ու դաստիարակու-
թյան դեմ:

Բանի յեն դրված ինչպես պետական ապ-
պարատը, այնպես ել բազմաթիվ բուրժուական
մանկական կազմակերպությունները, յեկեղե-
ցու ներգործությունը, մանկական մաժուլի և
բուրժուական ազգեցության այլ միջացները:

Գերմանիայում նախապատրաստվում ե հա-
մախմակերիական նոր դպրոցական որենք, վորը
նշանակում ե ամբողջ ժողովրդական դպրոցի
վատթարացում և վորն այն լիակատար կախման
մեջ ե գցում յեկեղեցուց: Նման որենք արդեն
անց ե կացված Գերմանիայի միքանի մասե-
րում (Բավարիա):

Վերջին շրջանում Անգլիայում նույնպես
կարելի յե նշել իմպերիալիստական վոգու ու-
ժեղացումը դպրոցում, նույնպես և մեր պա-
տանի ընկերների վոքը, բայց մարտական միու-
թյան ուրանվորական ուսուցչական միության ա-
ռաջավոր ուսուցիչների մի վոքը խմբակի դեմ
սկսվող աշկարա պայքարի սկիզբը:

Ֆրանսիայում, Զեխո-Սլովակիայում և մի
շարք ուրիշ յերկրներում ուժեղացել ե յեկեղե-
ցու ազգեցությունը, նույնպես և դպրոցում
սկսել են մտցնել ուսագական նախապատրաս-

տություն, վոր հանդիսանում ե արդեն դաս-
տիար սկության ընդհանուր միլիտարիստական
վոգու ուղղակի լրացումը:

Իտալիայում բուրժուազիան ժողովրդական
դպրոցը միացնում ե իր ֆաշիստական մանկա-
կան «Բալլիլա» կազմակերպությանը, փորձելով
այդպիսով ֆաշիստացնել ամբողջ աճող սերունդը:

Այս իդեոլոգիական կարգի հարձակման կող-
քին, ժողովրդական մասսաների ընդհանուր աղ-
քատացման հետ, վատթարանում ե նաև յերե-
խաների տնտեսական դրությունը:

Գործազրկության աճման հետ շարունակ ա-
վելի մեծ թվով յերեխաներ ու դեռահամներ
ստիպվում են իրենց բանվորական ուժն առա-
ջարկել, վորպեսզի իրենց դատումով պաշտպա-
նեն քայլայվող ընտանիքը, և այդպիսով իրենց
եժան աշխատանքը հակադրում են այն հասա-
կավոր բանվորների աշխատանքին, վորոնք կա-
պիտակիստական ուցիոնալացման հետևանքով
վողոց են շպրտված:

Իսկ յերեխաների այն մասսան, վորը,
չնայած նրանց «պաշտպանող» որենքներին, աշ-
խատում ե ձեռնարկություններում, առևտրում,
տնայնագործական ու տնային (домашний) ար-
դյունագործության մեջ (մենակ Սաքսոնիալում
մինչև 15 տարեկան 510,219 աշակերտից 1925թ.

փարձով աշխատում եր 93,936 կամ ավելի քան
18%), ուացիոնալացման ամբողջ ընթացքով
ել ավելի դաժան ե շահագործվում, ել ավելի
քիչ ե լուսի նշույլ տեսնում իր խավար կյան-
քում:

Մանավանդ վոր բուրժուական մանկական
կականի ակերպությունները (նրանց հետ նաև ամեն
տեսակ միջնականները – պրոմեջուոչներ) անսո-
վոր ակտիվություն են յերեխան բերում, փոր-
ձում են, ինչպես ել վոր լինի, իրենց յետերից
տանել ամբողջ աճող սերունդը:

Այս բոլոր յերեխութները նկատի ունենա-
լով, տասնմեկ յերկրի քսաներեք ներկայացուցիչ
կոնֆերենցիա գումարեցին և քննության առան
մանկական կոմմունիստական միությունների
կազմակերպության, աշխատանքի բովանդակու-
թյան ու մեթոդների հարցերը և մշակեցին կոն-
կրետ հրահանգներ բոլոր կոմյերի տմիություննե-
րի և մանկական կոմմունիստական շարժման
գործնական դեկավաների համար:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ.

Կազմակերպչական հարցի վերաբերյալ զե-
կուցումը և վիճաբանությունները ցույց տվին,
վոր յեթե առաջներում վեճեր, ընդհանուր ձե-

վակերպումներ կային դպրոցական ու գործարանային բջիջներին անցնելու մասին, ապա այժմ ծանրության կենտրոնը տեղափոխված ե ալդ անցան գործնական ուղիների մանրամասն մշակմանը:

Գերմանիայի ու Անգլիայի պատգամավորներն արդեն կարող եյին իրենց փորձի հիման վրա պատմել, թե ինչպես են կառուցում նրանք այդ դպրոցական բջիջները (գործարանային բջիջները տարածված են, գլխավորապես, Չինաստանում), ինչ սխալներ արին նրանց անցնելու ժամանակ, ինչպես պէտք ե առաջ շարժվել:

Միևնույն ժամանակ մլուս յերկրների պատգամավորները պետք ե խոսելին այս ուղղությամբ կատարած աշխատանքի միայն սկզբնական ետապների մասին, վորովհետև նրանք իրենց յերկրներում չափազանց քիչ գործնական աշխատանք եյին կատարել, վորպեսզի կարողանային խոսել փորձի հիման վրա:

Սակայն, չնայած այն բանին, վոր, որինակ, Գերմանիայի Պատանի Ապարատակյանների միությունը 290 դպրոցական բջիջ ունի (և 440 տեղական խմբակ), իսկ Անգլիայի Պատանի Ընկերների միությունը՝ 50 դպրոցական բջիջ (և 40 տեղական խմբակ) - այդ միություններն ամբողջությամբ կամ նույն իսկ իրենց միայն խոշո-

րագույն մասերով, անուամենայնիվ, դպրոցական բջիջների չեն անցել:

Դպրոցական բջիջները գեռ վոչ մի տեղ (բացառությամբ միայն Համբուրգի կազմակերպության) չեն հանդիսանում մանկական միությունների հիմքը:

Մը գլխավոր պատճառներն են - այդպիսի վերակառուցման մեջ դժվարությունները (ամեն մի դպրոցում, սովորաբար, 2-3 պիոներից աշվելի չեն), ուժերի թուլությունը (պակասում են տռաջնորդները) և մանկական միությունների ղեկավար որգանների վոչ բավական յեռանդուն աշխատանքը: Գործարանային բջիջների հիմունքով կոմյերիտմիության վերակազմության թուլությունը նույնպես ուժեղ արգելք ե հանդիսանում մանկական միությունների վերակազմությանը: Վորպեսզի բոլոր յերկրների համար կազմակերպչական վերակառուցման եյության և ուղիների պատկերացումը բոլորովին պարզորոշ դարձնի, կոնֆերենցիան ընդունեց մանկական կոմմունիստական միությունների միասնական որինակելի կանոնադրություն, վորն ամեն մի երկրի համար համապատասխան հրահանգ կունենա:

Արևմտյան մանկական միությունների համար մլուս կարենը ու նոր կազմակերպչական հարցը, վոր նշվեց կազմակերպչական զեկուցման վերա-

բերյալ բանաձեռւմ, հանդիսանում ե այն հրահանչացը, վոր կազմակերպությունն աճի տռավելապես անկուսակցական բանվորների յերեխաների հաշվին, կրօնական և վոչ թե աշխարհիկ դպրոցների յերեխաների հաշվին (ինչպես եք մինչև այժմ), մանր գրուղացիների յերեխաների, նույնպես և ինտելիգենցիայի ու մանր բուրժուազիայի յերեխաների հաշվին, վերջիններիս ուշադիր ընտրանքով:

Ճշգրտված ե նույնպես կոմյերիտմիումյան ու կոմկուսակցության ղեկավարությունը մանկական կոմմունիստական շարժման նկատմամբ, ուշադրություն ե դարձված այն բանի վրա, վոր կոմյերիտմիության ու կուսակցության ստորին որդաններն ընդհանուր կապ պահեն մանկական կոմմիությունների բջիջների ու խմբակների հետ:

Վերջապես, կոնֆերենցիան ծեվակերպեց գործնականում արդեն պատվաստված արտաքին ատրիբուտները (հատկանշերը) — կարմիր զզկապը, միասնական տարազը և նշանը, նույնպես և վճիռ ընդունեց պիտոներների որենքներ մոցնելու մասին, վորոնք պետք ե մշակվեն ամեն մի յերկում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԻ
ՀԱՐՑԵՐ.

Աշխատանքի բովանդակության ու մեթոդների ասպարիզում կոնֆերենցիան մատնանշեց,

վոր գլխավոր ուշադրությունը պետք ե նվիրել կազմակերպության ստորին բջիջներին, վորովհետև հենց այդ բջիջների աշխատանքը շատ թերություններ ունի: Կապիտալիստական յերկը ների բոլոր կազմակերպությունների խոշոր թերություններից մեկը մինչև այժմ նախ եր, վոր բացակայում եր պարզ պատկերացում, թե ինչպիսի հատկություններ ե անհրաժեշտ դաստիարակել մանկական կոմմունիստական շարժման ամեն մի մասնակցի մեջ, վորպեսզի պատրաստենք նրան կոմյերիտմիության և կոմկուսակցության համար, և յերկրորդ՝ աշխատանքը կենտրոնացված եր միայն մի վորեւ ասպարիզում (առավելապես դպրոցականում), ինչ վոր, իհարկե, շատ յերեխաների հրում եր մեր կազմակերպությունից:

Կոնֆերենցիան առաջ քաշեց կոնկրետ ունակություններ և գիտելիքներ, վոր յերեխաները պետք ե ստանան կազմակերպության մեջ յեղած ժամանակամիջոցում, և մատնանշեց, վոր մանկական բջիջները և խմբակները պետք ե կազմակերպեն յերեխաների աշխատանքն ու պալքարը վոչ միայն դպրոցում, այլև գործարանում, տնախագործության, գյուղատնտեսության մեջ, փողոցում, ուր պրոլետարիատի յերեխաներն անց են կացնում իրենց ազատ ժամանակը, զանազան

մանկական կազմակերպությունների մեջ և ընտանիքում, ուր յերեխաներն անց են կացնում իրենց կյանքի մեծ մասը և շփվում հասակավոր աշխատավորների հետ։

Բացի այդ, կոնֆերենցիայի վճիռներում մեծ ուշադրություն են վիրաված աշխատանքի աշխուժացման հարցերին, նրա ձեռքին ու մեթոդական լեզանակներին, զուտ խոսքով ազիտացիայի ղեմ պայքարելուն, վորով տառապում են արտասահմանյան մեր մանկական կազմակերպությունները։

Վերջապես, յենելով խոշորագույն յերկրների ընդհանուր-քաղաքական դրությունից, կոնֆերենցիան առաջին պլանի վրա քաշեց հասակավորների գործադրույթին կովին յերեխաների մասնակցելու յեվ պրոլետարական յերեխաների միջեվ իսկական միջազգային կապ ստեղծելու համար մղվող կովի հարցը (յերեխաների պատգամավորությունները դեպի ԽՍՀՄ, պիոներների ուղևորությունները մեկ յերկրից մյուսը և այլն)։

Յուցումներ տրվեցին նույնպես դպրոցական պայքարի մասնակի պահանջների, մի շարք յերկըրներում մանկական շարժում ստեղծելու, հակակրոնական պրոպագանդայի մասին, հատկապես այն յերեխաների մեջ, վորոնք այցելում են զանազան կրօնական միություններ և դպրոցի կրոնի դասերը։

Այս բոլոր հարցերում արդյունքների հասնելու իրեւ ամենաազլիսավոր պայմաններից մեկը, կոնֆերենցիան հատուկ ուշադրություն դարձըրեց ակտիվ յերեխաների հետ աշխատելու անհրաժեշտության, յերեխաների մասսայական ինքնազործունեյության զարգացման վրա։

Այս բոլոր ասպարեզներում առանձին մանկական միություններն արդեն նշանակալի փորձ ունեն։ Այսպես, որինակ՝ գերմանական միությունը նշանակալի չափով աշխատացրեց իր ձմեռային աշխատանքը, մասսայական աշխուժ ձևերով անցկացրեց ամառային կամպանիան (մինչեւ 50 ճամբար, եքսկուրսիա, ուղենորություններ և այլն), մասնակցեց կուսակցության կամպանիային համաժողովրդական քվեարկության ժամանակ։

Առգլիական մանկական միությունը (չնայած իր յերիտասարդությանը և ուժերի պակասին) հիանալի մասնակցեց հանքագործների հերոսական գործադրույթին պայքարին, ածխային ուղուններից մեկում նախաձեռնող հանդիսացավ դպրոցականների համակը անքի զրանդիող գործադրույթի, վորի մեջ գրավվեցին 11,000 յերեխա, ամառն աշխատանք սկսեց մանկական հրապարակներում և այլն։



մանկական կազմակերպությունների դեմ դպրոց-ներում, սկսեց իր յելույթների մեջ գրավել «Կարմիր Բաղեներ» սոցիալ-դեմոկրատական «վարդագույն» կազմակերպության պրոլետարական մանուկներին:

Վերջերս Փրանսիական միությունը նույնական աշխուժացրել ե իր գործունեյությունը, սկսել ե ակտիվ յելույթներ ունենալ (ընկնող Փրանսի պաշտպանության մուծանքների դեմ, ծննդյան ժամանակ և ալլն) դպրոցում և դպրոցից դուրս:

Այդ ամբողջ փորձը հաշվառելով, կոնֆերենցիան իր գլխավոր ուշադրությունը դարձրեց պայքարի լրզունգների կոնկրետիզացիայի, առանձին բջիջների ու խմբակների գործունեյությունը հասակավորների ընդհանուր պայքարի և յերեխաների լայն մասսաների (հատկապես ամենից ավելի շահագործվածների ու ճնշվածների) շահերի հետ կապակցելու վրա:

ՀԱԿԱՌԱԿՈՐԴ ՈՒ «ԶԵԶՈՔ» ՄԱՆԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Կոնֆերենցիան զանազան մանկական կազմակերպությունների քաղաքական նշանակության, աշխատանքի մեթոդների ու բովանդակությունը

կության մանրամասն գնահատությունը տվեց, նրանց յերեք հիմնական խմբակի բաժանելով՝ զուտ բուրժուական, սոցիալ-դեմոկրատական և այսպես կոչված «չեղոք»:

Հատուկ ուշադրություն նվիրվեց ամեն մի խթակի կարևորագույն մանկական կազմակերպությունների ուժեղ ու թույլ կողմերին:

Այսպես, քննադատության լենթարկվեց բուրժուական սկաուտական կազմակերպությունների (վորոնք տիպիկ են անգլո-սաքսոնական յերկրների համար), «Կարմիր Բաղեներ» սոցիալ-դեմոկրատական կազմակերպության (գերմանական լերկրներ), նույնպես և սպորտային, կուլտուրական և այլ «չեղոք» մանկական կազմակերպությունների իդեոլոգիան, աշխատանքի մեթոդները և բովանդակությունը:

Կոնֆերենցիան ցույց տվեց, վոր բոլոր յերկրներում մեր մանկական միությունները միայն այժմ են զիւում իրենց հակառակորդների ուսումնասիրությանը, վոր նրանց դեմ մզվող պայքարի գործնական վոչ մի փորձ դեռ չկա (բացառությամբ Ավստրիայի մանկական միության փոքրիկ փորձի), վոր մոմենտի խնդիրն ե-գործնականութեն սկսել այդ ուղղությամբ առաջին փորձերը։ Կոնֆերենցիան կարևորագույն ցուցումներ տվեց, թե ինչպես վարել պայքարը

այդ բոլոր կազմակերպությունների դեմ, ինչպես նվաճել պրոլետարական յերեխաների մասները, վորոնք դեռ գերի յեն նրանց մոտ:

ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՒ ԱԿՏԻՎ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Ամբողջ կոնֆերենցիան համերաշխությամբ մի յեզրակացության լեկավ, վոր առանց սիստեմատիկորեն աշխատելու զեկավար կազմի ու ակտիվ յերեխաների հետ, վորոնք հանդիսանում են այն գլխավոր միջոցը, վորով կոմյերիտմիության ցուցումներն անցնում են յերեխաներին, անկարելի յերագործել մանկական կազմակերպությունների առաջ դրված խնդիրները։

Հաշվառելով այն փորձը, վոր ունեցան Գերմանիայի (կուրսեր զեկավարների համար տեղերում ու կենտրոնում, պիոներական կոնֆերենցիաներ, ակտիվ յերեխաների ժողովներ, պիոներական դպրոցներ), Ֆրանսիայի, Նորվեգիայի, Ֆինլանդիայի (կուրսեր զեկավարների համար), Զելո-Սլովակիայի (պիոներական դպրոցներ ակտիվ յերեխաներ նախապատրաստելու համար) մանկական միությունները, կոնֆերենցիան մշակեց զեկավարներ նախապատրաստելու սիստեմը ներքեց մինչև վերև ու տվեց ակտիվ յերեխաների հետ աշխատելու բոլոր ձեռքի գնահատությունը։

Անհրաժեշտ համարելով յերեխաների հետագա մոտեցումն իրենց կազմակերպությունների ղեկավարությանը, կոնֆերենցիան առաջարկեց խորհրդակցությունների, հետազոտությունների, յերեխաների ուժերի ու ստորին ղեկավար որդանների (բջիջների, խմբակների, շրջանային բյուրոների) ամենորյա աշխատանքի հրահանգման զանազան ձևեր։

Կերպարես, կոնֆերենցիան ընդհանուր առամբ դրական համարեց պիոներական կոնֆերենցիաների փորձը, բայց առաջարկեց բոլոր մանկական միություններին առավելագույն չափով աշխատացնել այն, կառուցել բանվորական փոքր խմբակների սկզբունքով, ինչպես ալդ արվեց Պատանի Ծարտակյանների Միության Համագերմանական III կոնգրեսսում։

ՀԱՍԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐՆ ՈՒ ՅԵՐԵԽԱՆԵՐԸ.

Կոնֆերենցիան լսեց ընկ. Գերնլեյի զեկուցումն այս հարցի մասին և տվեց, ամենից առաջ, ղեպի ընտանիքն ու ղեպի այսպես կոչված «յերեխաների դաստիարակության ծնողական իրավունքներն» ունեցած մեր վերաբերմունքի սկզբունքային գնահատությունը։

Կոնֆերենցիան մատնանշեց, վոր «պրոլե-

առաջական մանկական շարժմանն անհրաժեշտ է
հեղափոխական ազգեցությունները պետք է
բղխեն վոչ թե ընտանիքից, այլ ձեռնարկությունից, վոչ թե վորեւ ծնողական կազմակերպությունից, այլ պրոլետարիատի դասակարգային կազմակերպություններից»։ Արանից յելնելով, կոնֆերենցիան առաջ քաշեց «;եղափոխական մանկական շարժման ոգնության կոմիտեներից ստեղծման կոնկրետ առաջարկը, վորոնց մեջ պետք է մտնեն կոմկուսակցություններին հարող բոլոր պրոլետարական կազմակերպությունների և արհմիությունների, կոոպերատիվների, պրոլետարական ծնողական և ուսուցչական կազմակերպությունների ստորին որդանների ներկայացուցիչները»։

Նման կոմիտեների ստեղծման փորձն Անգլիայում, Զեխո-Սլովակիայում և Գերմանիայի առանձին վայրերում ցույց ետալիս, վոր նրանք իրոք ընդունակ են ելական ոգնություն ցույց տալու պայքարող յերեխաներին և բանվորական մասսաներում մի ասպարեզ հանդիսանալ մեր ազգեցության լայնացման համար։

Կոնֆերենցիան անհրաժեշտ համարեց այս կարևորագույն հարցը կոմիտեների հաստատությանը դնել։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կոնֆերենցիան կրում եր զուտ գործնական, պրակտիկ բնույթ։ Պատգամավորները՝ միջազգային II կոնֆերենցիալի համեմատությամբ՝ շատ ավելի գործնական ցուցումներ ելին անում իրենց այն փորձի հիման վրա, վոր կուտակվել եր անցած շրջանում։

Վերջապես, կոնֆերենցիան ցույց տվեց մեր թույլ կողմերը՝ դպրոցի կյանքի կոնկրետ պայմանների վատ իմացություն, յերեխաների տնտեսական դրության, նույնպես և մեր հակառակորդների անբավարար ուսումնասիրություն, վոր անհրաժեշտ եւ ուղղել ամենամոտիկ ժամանակում իսկ։

Սրանք են անցյալ կոնֆերենցիայի հիմական ամփոփումները։ Միջազգային VII Մանկական Շաբաթը, վոր նշանակված ե այս տարվա մայիսի 15—22, պետք ե ցնցի յերեխաների լայն մասսաները, նրանց համախմբելով մանկական կոմմունիստական միությունների շուրջը և հասակավորների ուշադրությունը կենտրոնացնի աճող նոր սերնդի հերոսական պայքարի վրա; — հենց դրանով առաջին քայլերն անելով կոնֆերենցիայի ընդունած վճիռների իրագործման ուղիով։ Այս գրքունիում հավաքված են կոնֆերեն-

ցիայի ընդունած բանաձեերից ու թեղիսներից շատերը: Անհրաժեշտ ե, վոր ԽՍՀՄ պիոներական շարժման ամեն մի աշխատող ծանոթանանանք:

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ.

ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱ ՇՐՋԱՆՈՒՄ.

Բուրժուազիալի մասնակի ստարիլիզացիան (կայունացումը) նշանակում ե բանվորների դրության վատթարացում: Բանվորների շարունակ սրվող շահագործումը, հատկապն կապիտալիստական ռազմական գործությունների ֆիզիկական զարգացման վրա: Բացի դրանից, շարունակ պվելի յե աճում յերեխաների շահագործումը, ընդ վորում մանկական բանվորական ուժը հակադրվում ե նրանց հալրերի և հասակավոր յեղբայրների ու քույրերի բանվորական ուժին: Մի ամբողջ շարք յերկրներում տևական մասնայական դորժագրիության հետևանքը հան.

դիսանում ե մանկական աղքատության հետաքա աճումը, կիսաքաղցվիճակը, հիվանդությունները, մուրացկանությունը, սովը:

Կապիտալիզմի հարձակումը բանվոր դասակարգի վրա իր արտահայտությունը գտավնույնպես և դպրոցում՝ խիստ ուսակցիոն քաղաքականության միջոցով: Գերմանիայում նախապատրաստվում են որենքներ (դպրոցական ազգային որենք, ազգային կոնկորդատ), վորոնք նշանակում են ամբողջ դպրոցական սիստեմի վատթարացում և հոգեորականության ցանցով դպրոցների կաշկանդում: Անգլիայում, վերջին շրջանում, նույնպես կարելի յե հաստատել շրունակ ավելի սրվող իմպերիալիստական ու շովինիստական տենդենցիներ դպրոցական կրթության մեջ: Այն հարձակումը մանկական կոմմունիստական շարժման վրա, վոր պարունակվում եր կառավարության անդամներից մեկի ճառում, նույնպես և այն կարուկ միջոցառություններն ուսուցիչների, Բանվորական Ուսուցչական կիդայի ակտիվ անդամների վերաբերմամբ, ցույց են տալիս, վոր կառավարությունը վճռել ե պրոլետարական յերեխաների ընդհանուր ճնշման կամպանիա սկսել: Ֆրանսիայում ուսակցիոն քաղաքականությունը դպրոցներում ուժեղացված ե վոչ միայն վորոշ դպրոցներ

կրոնական կաղմակերպությունների տնօրինության տակ դնելով, ալև դպրոցական ծրագրում ռազմական նախապատրաստության մուծումով և նացիոնալիզմի վոգու աճումով։ Նման իսկ տեսդենց կարելի յե հաստատել նաև Զեխո-Սլովակիայում։

Մեն-միայն Խորհրդային Միության մեջ ե, վոր շարունակ ավելի մեծ չափով հոգում են աճող սերնդի պաշտպանության ու զարգացման մասին։ Կրթությունը զարգանում ե արագ թափով ու տարածվում նույնիսկ ամենահեռավոր մարզերում և անգրագետ բնակչության մեջ։ Կրթության հետ միաժամանակ պրոլետարական պետությունը հոգում ե նույնպես յերեխաների քիզիկական ու ընդհանուր զարգացման մասին։

Հատկապես ուշագրավ են այն հաջողությունները, վորոնց հասել են մանկական անապատանության դեմ պայքարելու գործում՝ մանկատներ, աշխատանքի արհեստանոցներ հիմնելով և այլ համապատասխան միջացառություններով։

ՄԻՋԱԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ.

Մանկական խմբակների ղեկավարների Միջազգային II կոնֆերենցիայի ժամանակից միջազգային մանկական շարժումը նշանակալի հա-

ջողությունների յե հասել։ Մի ամբողջ շարք յերկրներում արդեն դիմել են կենտրոնացրած մանկական միություններ կազմելուն, վորոնք շարունակ ավելի մեծ չափով են ուղղում իրենց գործունելությունը բուրժուական դպրոցի դեմ, դպրոցում ել՝ յերեխաների շահագործման դեմ։

Սակայն ուրիշ յերկրներում (Ֆրանսիա, Նորվեգիա, Շվեդիա, Շվեյցարիա, Դանիա, Կանադա, Ֆինլանդիա) մեր միությունների զարգացումը դանդաղեց։ Այդ յերկրների կուսակցությունների ու նույնիսկ կոմյերիտմիությունների անբավարար ուշագրությունը խիստ հաճախ հանդիսանում եր այդ յերկրներում ունեցած անբավարար հաջողության պատճառը։ Այդ յերեսութիւնաբերության պատճառը — աշխատանքի կենդանի բովանդակության բացակայությունն ե։

Ֆրանսիայում դրությունը խիստ բարեհաջող ե մեր մանկական շարժման արագ ու լայն զարգացման համար։ Սակայն կուսակցության շարքերում նկատվում ե այդ հարցի նշանակության անհասկացողություն և թերագնահատություն։ Զեխո-Սլովակիայում միայն վերջերս են դիմել մանկական միություն կազմելուն, վորը, սակայն, շատ դանդաղ ե զարգանում։ Այդ յերեսու յերկրի կուսակցությունները և կոմյերիտմիությունների պետք ե ձգտեն մանկական միությունների զարգացումն արագացնել։

Ավստրիայում կոմիերիտմիությունը դիմել
ե մանկական միության ստեղծման և մեծ ու-
շադրություն ե նվիրում այդ աշխատանքին: Հա-
րավային Ամերիկայում նույնպես հիմնված են
մի շարք միություններ, վորոնք հարաբերաբար
ամրացել են (Չիլի, Արգենտինա, Ուրուգվայ),
արագ զարգանում են աչքի ընկնող մասսայա-
կան աշխատանքի շնորհիվ: Այդ միությունների
զարգացումն ընթացել ե մեծ մասամբ այդ յեր-
կըրների կուսակցության ու կոմիերիտմիության
մշտական ուշադրության ու պաշտպանության
շնորհիվ: Վերջերս Մեքսիկայում նույնպես հիմ-
նված ե կոմմունիստական մանկական միություն:
Անցյալ տարի Զինաստանում հիմնվեց հեղափո-
խական կոմմունիստական մանկական շարժում,
վոր առաջին քայլերն արեց տնտեսական պա-
հանջների համար մղվող պայքարի ասպարիզում
և ակտիվ կերպով մասնակցեց ազգային-հեղա-
փոխական պայքարին:

Սակայն, անկասկած ամենամեծ հաջողու-
թյունների հասել են Գերմանիայում ու Անգլիա-
յում: Այդ լերկու միությունը – հատկապես առա-
ջինը – կանգնած են մանկական լայն մասսաների
մեջ ամենորյա աշխատանք կատարելու ճանա-
պարհի վրա: Գերմանական մանկական միությունը
կարողացավ կիրառել աշխատանքի կենդանի

ձևեր և դիմեց ղեկավարների սիստեմատիկ նա-
խապատրաստության: Անգլիայում մեր միու-
թյունն ակտիվ մասնակցեց պրոլետարիատի պայ-
քարին և փորձեց ընդհանուր գործադուլի ու,
գլխավորապես, հանքագործների գործադուլի շըր-
ջանում, պայքարի մեջ գրավել մանկական մաս-
սաները «Ոգնություն հանքագործների յերեխա-
ներին» լոգունգով և առաջ քաշեց դպրոցներում
ձրի սնունդ տալու ու նրանց դրամական աջա-
կցություն հասցնելու պահանջը:

Միջազգային II կոնֆերենցիայից հետո,
Միջազգային Մանկական Բյուրո ստեղծելու մի-
ջոցով, ԿիՄ-ի Գործկոմը նշանակալի չափով ու-
ժեղացրեց իր աշխատանքը մանկական միություն-
ներում: Միջազգային Մանկական Բյուրոն աշ-
խատում եր այն խնդիրների իրագործման ուղ-
ղությամբ, վորոնք նշված եյին մանկական խըմ-
բերի առաջնորդների Միջազգային II կոնֆերեն-
ցիայի և ԿիՄ-ի Գործկոմի յերկու պլենումի կող-
մից: Հատուկ նշանակություն եր տրվում այն
բանին, վոր հասնենք կազմակերպչական ձևերի
միորինակության, աշխատացնենք ու լավացնենք
միությունների աշխատանքի մեթոդները և բո-
գանդակությունը: Լավ արդյունքներ ունեցավ
Միջազգային Մանկական Բյուրուի ներկայացուց-
չի այցելությունը կենտրոնական Յեվրոպայի

մանկական կազմակերպություններին։ Այդ Միջաղգալին Մանկական Բյուրոյին հնարավորություն տվեց ավելի լավ ծանոթանալ այն միությունների աշխատանքին, վորոնք գործնականում ամենից լավ ելին իրականացրել միջաղգային դեկավար որգանի հրահանգները։

Ստացված արդյունքները և կատարված աշխատանքը, սակայն, վոչ մի դեպքում չպետք է մեր ուշադրությունը հեռացնեն Միջաղգային Մանկական Բյուրոյի աշխատանքի թերություններից ու սխալներից։ Միայն կտրուկ ինքնաքննադատությունը կարող է մեզ ոգնել ուղղելու արած սխալները։ Միջաղգային Մանկական Միությունը միայն ընդհանուր մասշտաբով կարող եր զեկավարել զանազան միությունների աշխատանքը։ Նա դեռ խիստ մեծ չափով ինֆորմացիայի որդան եր և չեր կարող բավականաչափ ակտիվությամբ ղեկավարել միջաղգային մանկական շարժումը։ Լավագույն մանկական միությունների փորձը բավականաչափ չեր ոգտագործվում միջաղգային գործունեյության շրջանակներում։ Միջաղգային Մանկական Բյուրոն բավականաչափ պայքար չեր մղում այն իդեոլոգիական քառի դեմ, վոր իշխում եր կուսակցության ու կոմյերիամիության շարքերում մանկական միությունների անելիքների, դերի ու նպատակ-

ների հարցի վերաբերյալ և վորը մասնակի կերպով նկատվում ե այժմ ել։

Աշխատանքի այս բոլոր թերությունները կարող են վերացվել միայն Միջաղգային Մանկական Բյուրոյի ուժգին աշխատանքով, միությունների լավագույն կապով կիՄ.ի Գործկոմի ու Միջաղգային Մանկական Բյուրոյի հետ և կուսակցության ու կոմյերիամիության կողմից մանկական շարժմանը ցուց տրվող իրական ոգնությամբ։

ԱՐԱԳԱՅԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

ԿիՄ.-ի վերջին յերկու պլենումինշած խնդիրները հիմնական են բոլոր միությունների հետագա աշխատանքի համար։ Ցերեխաների տնտեսական ու քաղաքական դրությանը հարմարեցրած ամենորյա մասսայական աշխատանքը հանդիսանում է մեր միությունների կարևորագույն խնդիրը։ Նրանք ավելի մեծ չափով, քան առաջ, պետք է իրենց գործունելության ծանրության կենտրոնը տեղափոխեն դպրոց, կիրառեն աշխատանքի կենդանի մեթոդներ և դպրոցական բջիջների հիման վրա վերակաղմնելով, իրենց կազմակերպչական կառուցգածքը հարմարեցնեն կատարած աշխատանքին։ Մակար այն փաստի

Ընդգծումը, զոր դպրոցը հանդիսանում ե մեր
մանկական միությունների գործունեյության
հիմական ասպարեզը, ամենեին չի նշանակում,
թե պետք ե միակողմանի պայքար մղել դպրո-
ցի հարցերի վերաբերյալ, այլ պետք ե բոլոր
տնտեսական, քաղաքական, կազմակերպչական
և կուլտուրական հարցերը քննության առնել
դպրոցական բջիջում ու տեղափոխել դպրոց։

Առաջնորդների Միջազգային Ակոնֆե-
րենցիալի գյուղի աշխատանքի մասին մշակած
հրահանգները միևնույն ուժն ունեն, ինչ զոր
առաջ։ Մեր գրականությունը պրոպագանդիս-
տական ուղևորությունների միջոցով պետք ե
տարածվի գյուղում՝ նպատակ ունենալով բջիջ-
ներ ստեղծելը։

Մինչև այժմ համարյա բոլոր միությունները
բավականաշափ ուշադրություն չեյին նվիրում
հակառակորդների մեջ աշխատելուն, բոլոր կազ-
մակերպությունների առաջ դրված ե այդ գոր-
ծունեյությանը մեծ ուշադրություն նվիրելու
խնդիրը, վորպեսզի մենք կարողանանք շփման
մեջ մտնել ուրիշ մանկական կազմակերպու-
թյունների մասսաների հետ և նվաճել այդ հա-
կառակորդ կազմակերպությունների մեջ գտնվող
յերեխաներին։

Դեռ Միջազգային Ակոնֆերենցիայում

դրվեց մանկական մամուլի հարցը։ Մեր մամու-
լը դարձյալ չափազանց թուլ ե, չափազանց
ընդհանուր բնույթ ե կրում, դեռ բավականա-
չափ մանկական մամուլ չե, վորը բազմակողմա-
նի լուսաբանում ե մանկական կյանքի բոլոր
հարցերը, և չի համապատասխանում յերեխաների
պահանջներին։ Այս իմաստով Ակոնֆերենցիայի
վճիռները մամուլի մասին մնում են ուժի մեջ։
Մեր մամուլի տիրաժը նույնպես նշանակալի
չափով պետք ե բարձրացվի։

Եեկավարների կադրն ամբացնելու և լայ-
նացնելու համար վորոշ միությունների արգեն
արած փորձերը պետք ե բոլոր միությունները շա-
րունակեն և ավելի մեծ յեռանդով։ Պետք ե լայն
աշխատանք ծավալել նույնպես մանկական ակ-
տիվում, առանց վորի անհնար ե մասսայական
մանկական շարժման զարգացումը։ Սրա հետ
միասին հարկավոր ե կոմկուսակցությունից լա-
վագույն պաշտպանություն ստանալն ապահովել
և այն ուղղությամբ աշխատել, վորպեսզի Կո-
մինտերնի կազմը լուրով վճիռները բոլոր միու-
թյունների կողմից անցկացվեն։ Չափազանց ան-
հրաժեշտ ե, վոր կոմմունիստական կուսակցու-
թյունները, համակըող բանվորների պաշտպա-
նությամբ, ստեղծեն «Հեղափոխական մանկա-
կան շարժման ոգնության կոմիտեներ»։ Նախորդ

աշխատանքի կարևոր դասը հանդիսանում է
այն յեղբակացությունը, վոր առանձին միու-
թյուններն այլևս չպետք ե կարեռագույն աշ-
խատանքը կամպանիայի ձեռվ վարեն, այլ ավելի
շատ կենտրոնանան ամենորյա աշխատանքի վրա:

ԿիՄ-ի Գործկոմի առաջ դրված ե մի ամ-
բողջ շարք արևելյան յերկրներում լայն ման-
կական միություններ ստեղծելու խնդիրը. Նկա-
տի ունենալով այդ յերկրների հատուկ պայման-
ները, Գործկոմը պետք ե ուսումնասիրե այն
հարցը, թե ինչ ձև ու կազմակերպչական կա-
ռուցվածք պետք ե ընդունեն այդ միություննե-
րը, վորովհետև ուրիշ պայմանների հետևանքով
մեր աշխատանքն Արևելքում պետք ե այլ բնույթ
կրի, քան Յեվրոպայի ու Ամերիկայի միություն-
ներում:

Միջազգային Մանկական Բյուրոն պետք ե
ձգտի ԽՍՀՄ պիոներների կյանքն ու փորձն
ավելի հայտնի ու ժողովրդական դարձնել և
ամրացնել ԽՍՀՄ պիոներների կազմակեր-
պությունների ու արտասահմանյան կազմակեր-
պությունների կապը:

Առանձին Մանկական միությունները ԿիՄ-ի
Գործկոմի ու Միջազգային Մանկական Բյուրոյի
հետ սերտորեն կապելով, պետք ե հասնել սի-
ջազգային փորձի լավագույն ոգտագործմանը,

վորպեսպի այդպիսով Միջազգային Մանկական
Բյուրոն հնարավորություն ունենա ավելի լավ
մասնակցելու, քան մինչև այժմ, միություննե-
րի ամենորյա կյանքին:

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՄԻՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԱՅԼ ՄԱՆԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Ուրիշ մանկական կազմակերպությունների
ուսումնասիրությունը և նրանց դեմ պայքարելը
մեր աշխատանքի ընդհանուր սիստեմում հան-
դիսանում ե ամենից հետամնաց ասպարեզը:

Մինչդեռ աշխատանքի մլուս ասպարեզնե-
րում արդեն վորոշ հաջողությունների հասել ենք
կայ նրանց հիմքը դրել, հակառակորդ մանկա-
կան կազմակերպությունների դեմ պայքարը
դեկավարելու տեսակետից մանկական կոմմու-
նիստական միությունների մեծամասնությունը
նույնիսկ չունի բոլոր անհրաժեշտ տվյալներն
այդ պայքարը վարելու համար (այսպես, որինակ՝
նույնիսկ ճշգրիտ տեղեկություններ չունենք ա-
մենախոշոր մանկական կազմակերպությունների
քանակական ուժի, սոցի սլական կազմի, աշխա-

տանքի բովանդակության, ձեռքի ու մեթոդների
մասին):

Այս գըությունը հետագայում բոլորովին
անհանդուրժելի յե:

Մանկական կոմմունիստական շարժման ղե-
կավարների Միջազգային III կոնֆերենցիան պար-
տավորեցնում ե բոլոր մանկական կոմմիություն-
ներին և կոմիերիտամիություններին ամենակարճ
ժամկետում դիմել՝

ա) թեկուղ կարեորագույն մանկական կազ-
մակերպությունների սոցիալական կազմի, աշ-
խատանքի բովանդակության ու մեթոդների (ու-
ժեղ և թույլ կողմերի) բազմակողմանի և լուրջ
ուսումնասիրությանը.

բ) ամեն յերկրի պայմաններին համապա-
տասխան հակառակորդների դեմ պայքարելու
ձեռքի ու մեթոդների մշակմանը և

գ) անհապաղ առաջին գործնական քայլերն
անել հակազդելու հակառակորդ մանկական կազ-
մակերպությունների գործունելությանը, ոգտա-
գործելով ինչպես ուղղակի պայքարի մեթոդ-
ները, այնպես ել միասնական ֆրոնտի յուրա-
հատուկ տակտիկան աշխատավորների յերեխա-
ների համար մղվող պայքարում:

ՀԱԿԱՌԱԿՈՐԴ ՄԱՆԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Այս ինդիբները մանավանդ անհետաձգելի
յեն, վորովինետև ժամանակակից դասակարգային
պայքարում աճող սերնդի վրա ազդեցություն
ունենալն ահազին քաղաքական նշանակություն
ունի: Վերջերս բուրժուազիան բացառիկ ուշա-
դրություն ե նվիրում յերեխաների մեջ կատար-
վող աշխատանքին: Նա այս աշխատանքում չի
կարող բավարարվել միայն իր պետական ապօպա-
րատով—դպրոցով, վորովինետև այդ ապօպարատը
քիչ ե հարմարեցված աճող սերնդի ակտիվու-
թյան, ուղարկան ինքնուրունության և աշխա-
տանքի նախաձեռնության դաստիարակության
համար, առանց վարի հենց ալժմ չի կարող կա-
ռավարվել իմպերիալիստական բուրժուազիան:

Ծավալվող դասակարգային կորիվը, վոր աշ-
խատավոր մասսաների առաջ բաց ե անում սու-
ցիալական սուր հակասություններ, նույնպես
հարկադրույթ ե բուրժուազիային կիրառել յերե-
խաների դաստիարակության ավելի նուրբ ու
միենույն ժամանակ մասսալական մեթոդներ:
Իրեւ լրացում, յերբեմն և իրեւ վոխարինում
հին սիստեմատիկական դպրոցի, հանդես ե գա-
լիս բուրժուական մանկական շարժումը, վոր աշ-

խատանքի գրավիչ, կենդանի ձևերով հրապուրում ե պըլետարական յերեխաների մասսաները և միւնույն ժամանակ նրանց տանում եռոմանտիկայի ու ֆանտազիայի աշխարհը, հեռու կյանքից ու դասակարգային կովից։

Վերջերս բուրժուազիան մի շարք յերկրներում (Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա) իր մանկական կազմակերպությունների միջոցով փորձում ե աշխատացնել նաև դպրոցը, ջանում ե կապակցել նրանց աշխատանքը, միացնել իր ճիգերը բուրժուական կարգի պաշտպանների, հնագանդ բանվորների ու դիմացկուն զինվորների դաստիարակելու իր իմալերի աշխատական դիտավորությունների համար։

Զանազան սոցիալ-դեմոկրատական մանկական կազմակերպություններ մեքենայորեն ընդուրինակում են բուրժուական մանկական շարժման մեթոդները, համարյա ամբողջովին վերցնում են նրա բովանդակությունը, այդ արդարացնելով այն անհրաժեշտությամբ, թե պետք ե հաշվի առնել մանկական հասակի հոգեբանությունն ու հակումները, և նրան կպցնում են արտաքուստ հեղափոխական լոգունդներ բանվորական լայն մասսաներին ու նրանց յերեխաներին խարելու համար։

Այս բոլորը քաղաքական մեծ վտանգ են եր-

կայացնում աճող սերնդի և հեղափոխական պայքարի հետագա ծավալման համար։

ԲՈՅ-ՍԿԱՌԻՏԻՍԿԱՆ, ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՑԵՎ ԿՐԵ-
ՐԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Մանկական շարժման ձևով բուրժուական իմպերիալիստական դաստիարակության ամենամշակված սիստեմը սկառատիզմն է։ Բոյ- և գըրլ-սկառատների մոտ բոլորովին ակներե հանդես ե գալիս յերեխաների ու դեռահասների միլիտարիստական ֆիզիկական ու բարոյական մարզանքը, վոր կապված ե սուր շովինիզմի ու դասակարգային հաշտության միտումի հետ «հանուն աստրծո, հայրենիքի ու թագավորի»։

Իտալական ֆաշիզմը, վոր այժմ, դպրոցի վրա ուժեղ ձնշում գործադրելով, շարունակ ավելի յելայնացնում իր «Բալլիլա» մանկական կազմակերպությունը, նույնպես առանձնապես ուժեղ կերպով մշակում ե ազգի միության իդեան և ուղագործում ամբողջ աճող սերունդը։

Զանազան կղերական կազմակերպություններ, վորոնք չունեն այդպիսի համախմբված կարգավահ մանկական կոլեկտիվներ, իրենց իդեոլոգիալով, սակայն, մեծ մասամբ հարում են վերել մատնանշած վառ-բուրժուական կազմակերպություններին։

Բոյ. սկառտական և ֆաշիստական մանկական կազմակերպությունների ուժեղ կողմերն են՝
ա) ստորին կազմակերպություններում մանկական նախաձեռնության յեվ ինքնազործունեյության զարգացումը, վորի շնորհիվ կարողանում են հրապուրել ամենաակտիվ յերեխաներին, վորոնք վոչ դպրոցում, վոչ ել ընտանիքում իրենց ակտիվության բավարարություն չեն գտնում.

բ) շարժման արտաքին ճեվերի գոնեղություն, զրավշություն, վորի շնորհիվ նվաճվում են այն յերեխաների մասսաները, վորոնք վոչ մի ուրախ բան չեն տեսնում իրենց ընտանեկան ու դպրոցական կյանքում.

գ) զանազան առաջադրությունների և լոգունգների կոնկրետ, յերեխաների համար հասկանալի լինելը, կազմակերպության մեջ ստացած ունակությունների և գիտելիքների գործնական կիրառելիությունը.

դ) յերեխաների ու անչափահասների ճանապարհորդության, հերոսական սխրագրության յեվ արկածների հակումների հմուտ ոգտագործում.

ե) կազմակերպչական կառուցվածքի պարզուղություն, շարժուն, զոդված փոքրիկ մանկական կոլեկտիվների ստեղծում՝ վերեկց ունեցած ամուր ղեկավարությամբ.

դ) աշխատանքի բոլոր կենդանի ճեվերի և

հատկապես խաղերի կիրառում՝ ամենազանազան ասպարեզներում մարզելու համար:

Այդ կազմակերպությունների թույլ կողմերն են՝

ա) պրոլետարական յերեխաների տնտեսական դրության լավացման խսկական հոգատարության բացակայություն, նրանց շահագրծման դեմ մղվող կովի բացակայություն, շրջապատի դասակարգային կովի փաստերի յեվ դասակարգային հակասությունների մասին լոելը կամ կեղծ բացատրություններ տալը.

բ) մանկական նախաձեռնության յեվ ինքնազործունեյության սահմանափակումը կազմակերպության ստորին քցիշների նեղ շրջանակներով և միայն գործնական աշխատանքի հարցերով՝ ստրկական հնագանդությամբ իդեոլոգիական պարեկզում.

գ) պետերի, ուսուցիչների, ձեռնարկատերերի և այլն հեղինակության անպայման ճանաչում, նրանց քննադատության, նրանց հետ համաձայն ըլինելու արգելում.

դ) աշկարա թշնամություն դեպի բանվորական կազմակերպությունները, ձեռնարկատերերի պաշտպանություն և ոգնություն, բուրժուական կառավարության և նրա տեղական ներկայացուցիչների ամեն մի գործողության արդարացում,

ամենառեակցիոն ու շահագործող տարրերի հետ
վատ թագցված կապ.

ե) շատ կազմակերպություններում ստո-
րին դեկավարների պրոլետարական կազմ, նույն-
պես և կազմակերպությունների իսկ սոցիալա-
կան կազմի զանազանություններ, վոր բաղկում-
ներ ե առաջ բերում առանձին խմբակների միջև
և նրանց ներսում:

Աշխատանքի այս թույլ կողմերի ոգտա-
գործման գծով ել հարկավոր ե, վոր մանկական
կոմմունիստական միությունները ծավալեն պար-
քարը բանվոր դասակարգին թշնամի այդ կազ-
մակերպությունների դեմ, նրանց հետ վոչ մի
համաձայնություն չկնքելով, այլ գործելով նրանց
մեջ մտնող պրոլետարական յերեխաների միջո-
ցով։ Մեր գլխավոր խնդիրն ե—պոկել նրանցից
պլութոարական յերեխաներին յեվ սրանց նոր
շերտերը յետ պահել այդ կազմակերպությունները
մտնելուց, նրանց վարկարեկելով աշխատավոր
մասսաների աչքում։

ՄԱՆԿԱԿԱՆ ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԸ.

Մանկական սոցիալիստական կազմակերպու-
թյունները, հավատարիմ իրենց ընդհանուր ռե-

փորմիստական հիմունքներին, վաստավես իրենց
անդամներին դաստիարակում են վոչ թե դա-
սակարգային կրվի գիտակցման և նրան մաս-
նակցելու անհրաժեշտության վոգով, այլ նրանց
մեջ մշակում են ամբողջ մարդկության հաշտեց-
ման իդեոլոգիան։

Նրանք այս տեսակետից ըստ եյության վո-
շընչով չեն զանազանվում ակների բուրժուա-
կան կազմակերպություններից։

Բուրժուական բոյսկառատական կազմա-
կերպությունների աշխատանքի բովանդակու-
թյան ու մեթոդների հետ ունեցած նմանու-
թյունն այնից վառ կերպով արտահայտվում ե
ավարիական «Կարմիր Բազեների» կազմակեր-
պության գործունեյության մեջ։ Այստեղ ել գե-
րակշռում ե բնության ու հետախուզականու-
թյան ուսմանական թերթեալիկան։ Յերեխաներին պարտավո-
րեցնում են ոգնել ըոլոր մարդկանց, իսկ պրո-
լետարիատի և պրոլետարական յերեխաների
կյանքն ու պայքարն ամենաչնչին տեղ ե գրա-
վում նրանց աշխատանքում։

Մանկական սոցիալիստական կազմակերպու-
թյունները մի կողմ են քաշվում նույնպես և
բանվորների և նրանց յերեխաների պայքարից։
Նույնիսկ այնպիսի պայքարից, վոր անմիջակա-
նորեն վերաբերում ե բանվորների յերեխաների

կյանքին, ինչպես, որինակ՝ դպրոցական պայքարը, մանկական աշխատանքի շահագործման, մանկական կարիքի դեմ մղվող պայքարը։ Այս խնդիրը ձևականորեն իրենց վրա յեն վերցնում հատուկ այս նպատակի համար ստեղծված ծնողական կադմակերպությունները։

«Կարմիր Բազեների» նոր կազմակերպությունը լավագույն որինակն ե այն բանի, թե ինչպես վորևե միջնական մանկական կազմակերպություն, վորը ժխտում ե պրոլետարիատի դասակարգային կովկին մասնակցելը, գլորվում ե բուրժուազիայի ճամբարը՝ թագնվելով հեղափոխական լոգունգների տակ։

Այն բոլոր գրավիչ կողմերը, վոր այդ կազմակերպությունն ունի յերեխաների համար, վերցրած են սկառատիզմի զինանոցից, իսկ այն բոլորը, ինչ մնացել ե հին տիպի «Մանուկների Բարեկամներ» մանկական սոցիալիստական կազմակերպությունից, բացասական մոմենտներ են և իրենցից հրում են ամենաակտիվ պրոլետարական յերեխաներին։

Բոլոր մանկական սոցիալիստական կազմակերպությունների հիմնական թուլություններն են՝ պրոլետարական յերեխաների կյանքի ու պայքարի ակտուալ հարցերի վերաբերյալ տիրող մթությունը, յերեխաների քիչ ակտիվությունը յեվ

նրանց նկատմամբ հասակավորների չափազանց ուժեղ խնամակալությունը, ներքին ինքնամփոփ, կուլտուրական աշխատանքով զբավկելը և վ մանր-բուրժուական բարոյականության քարոզը։

Մեր գիծն այդ կազմակերպությունների վերաբերմամբ պետք ե այն լինի, վոր այդ կազմակերպությունների պրոլետարական յերեխաների մասսաները քաշենք մեր պայքարի ու աշխատանքի մնջ, դրա համար ոգտագործենք նրանց արտաքուստ-բանվորական լողունգները և մերկացնենք դեկավարների կողմից այդ լողունգները կենսագործելու չկամությունը։

«ԶԵԶՈՔ» ՅԵՎ ՀԱՍԱԿՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Սրանց են պատկանում զանազան արհմիութենական մանկական կազմակերպությունները, բացի այդ, ազատամիտների մանկական կազմակերպությունները, բանվորական սպորտային ու կուլտուրական կազմակերպությունները։

Այդ կազմակերպությունները սովորաբար գտնվում են վորևե քաղաքական կուսակցության ազդեցության տակ, բայց ամենից շատ նրանց կարելի յե մեզ սոտեցնել ու նվաճել։

ՄԵՐ ՊԱՅՔԱՐԻ ԶԵՎԵՐԸ ՅԵՎ ՄԵԹՈՒՆԵՐԸ.

Հաշվառելով մանկական կոմմունիստական միությունների մեծամասնության ուժերը և հնարավորությունները, Միջազգային III Կոնֆերենցիան մոտակայում աննպատակահարմար և համարում իր ուժերը ցրիվ տալ ամեն տեսակ մանր ու տրոհված մանկական կազմակերպությունների դեմ մղվող կռվում, այլ գտնում ե, վոր հիմնական աշխատանքը և հիմնական ուժերը պետք ե ուղղել պայքարելու ամեն սիյերկի ամենակարեռը մանկական կազմակերպության դեմ։ Ալդպիսի կազմակերպություններ բոլոր անդլուսքսոնական յերկրների համար հանդիսանում են սկառատական կազմակերպությունները, գերմանական յերկրների համար (Գերմանիա, Ավստրիա, Չեխո-Սլովակիա)՝ մանկական սպորտալին միությունները, «Յերեխաների Բարեկամներ» մանկական սոցիալիստական խմբակները և «Կարմիր Բաղենները»։

Բացի այդ, այնպիսի լերկրներում, ինչպես Շվեդիան, Ֆինլանդիան և Լեհաստանն են, ամենաուժեղ ու կարևոր հակառակորդները հանդիսանում են նույնպես և բուրժուական սկառատական ու մանկական կրոնական կազմակերպությունները։ Իսկ նորվեգիայում կարևորագույն

հակառակորդները հանդիսանում են՝ մանկական սոցիալիստական կազմակերպությունը Տրանսելի ղեկավարությամբ և «Կարմիր Սկառատները»։

Սրա հետ միասին չի կարելի բոլոր կազմակերպությունների դեմ պալքարելու ընդհանուր ձեւը մշակել։ Նրանցից ամեն մեկը պահանջում ե հատուկ մերձեցում։

Հակառակորդների առաջին խմբակի վերաբերմամբ մենք չենք կարող թուլատը վոչ մի միատեղ յելույթ։ Նրանց ազդեցության լայնացմանն արգելը լինելու նպատակով, անհրաժեշտ է, վոր մենք աշխատացնենք մեր սեփական աշխատանքի ձևերը և մեթոդները, ավելի մեծ չափով, քան առաջ, ուշադրություն դարձնենք յերեխաների ինքնագործունելության և ակտիվության զարգացման վրա, ձգտենք հասնել ամբողջ աշխատանքի իսկական աշխատացման։

Իբրև հակակշիռ այդ կազմակերպությունների զանազան միջոցառությունների (եքսկուրսիաներ, հրապարակներ, ճամբարներ, տոներ և ալլն), մենք պետք ե ինքնուրոււն կերպով կազմակերպենք նման իսկ յելույթներ, դրանց համակերպենք նման իսկ յելույթներ, դրանց համար լայն պլուագանդ անելով այն պրոլետարական յերեխաների միջավայրում, վորոնք դեռգտնվում են նրանց շարքերում։ Հասակավորների մեջ պետք ե կատարվի նույնպես և բացա-

տրական ու ագիտացիոն աշխատանք։ Դպրոց-
ներում մեր մանկական բջիջները պետք ե ամեն
մի փոքրիկ փաստում մերկացնեն այդ կազմա-
կերպությունների բուրժուական եյությունը և
«պետերի հետ» հաշտվելու նրանց քարոզին հա-
կադրեն մեր ակներև պայքարը նրանց դեմ։

Սոցիալ-դեմոկրատական մանկական խմբակ-
ները վարոշ չափով ել ավելի վտանգավոր հա-
կառակորդներ են, վորովհետև նրանք բանվորա-
կան լողունգների տակ բուրժուական ազդեցու-
թյունն են տարածում յերեխաների վրա։ Այդ
կազմակերպությունների վերաբերմամբ մեր
խնդիրն ե՝ նրանց գործունելության կոնկրետ
փաստերով մերկացնել այդ գաղտնի բուրժուա-
կան ազդեցությունը և նրանց միություններում
յեղած յերեխաներին քաշել մեր մարտական յե-
լույթների մեջ։ Այդ կազմակերպությունների
հետ մենք կարող ենք վարել միասնական ֆրոն-
տի յուրատեսակ տակտիկա։

Այսպես կոչված չեզոք կազմակերպություն-
ների վերաբերմամբ մենք կարող ենք ավելի մեծ
չափով, քան զորե այլ տեղ, միասին յելույթներ
ունենալ և մեր անդամների մի մասն ուղարկել
այդ կազմակերպությունները (սպորտային, կուլ-
տուրական)։ Այդ կազմակերպություններում
հասուկ կարևոր նշանակություն ե ստանում

զեկավարների ու զեկավար պաշտոնների նվա-
ճումը։ Մեզ համակիր զեկավարների մի մասը
կարելի յե զբավել մեր աշխատանքի մեջ և աս-
տիճանաբար հանել հակառակորդի զեկավարու-
թյունից։ Միևնույն ժամանակ մեր կազմակեր-
պությունների ակտիվ յերեխաները կարող են
մանկական խմբերի, սպորտային միությունների
և այլն գլուխ կանգնել և այնտեղ սիստեմատիկ
կերպով կտարանը մեր աշխատանքը։ Այդ կազ-
մակերպություններից կարևորագույնները պետք
ե համարել բանվորական սպորտային մանկա-
կան միությունները, նրանցից պլողետարական
յերեխաների նվաճումը հանդիսանում ե մոտա-
կա աշխատանքի ամենազլիսավոր խնդիրը։

Բոլոր կազմակերպություններում, ուր մենք
ցանկանում ենք ազդեցություն ձեռք բերել, ա-
ռաջին հերթին անհրաժեշտ ուշադրություն դար-
ձնել յերեխաներից յելած առաջնորդների նվաճ-
ման վրա, վորովհետև նրանց յետելից կերթա և
նրանց մասսան։

Այդամող աշխատանքներում հատուկ խըն-
դիր ե հանդիսանում այն մեծողների ուսումնա-
սիրությունը, զոր մեր հակառակորդները կիբա-
ռում են մեր դեմ պայքարելու համար։

Այս բոլոր աշխատանքը չի կարող առան-
ձնացած կատարվել այն պայքարից, զոր կոմյե-

ըիտմիությունը վարում ե հակառակորդ պատա-
նեկան կազմակերպությունների դեմ: Այդ պայ-
քարի համար կոմիերիտմիության ստեղծած
ապկարատի մեջ պետք ե ժանեն նաև մանկա-
կան մշությունների ղեկավարները, վորպեսզի
իրազեկ լինեն կոմյերիտմիության բոլոր միջո-
ցառություններին և իրենց գործողությունները
համաձայնեցնեն կոմյերիտմիութենական կազմա-
կերպությունների գործողություններին: ԿիՄ-ի
Գործկոմի VΙI լայնացրած պլենումի վճիռները,
վոր վերաբերում են հակառակորդների դեմ կովե-
լուն, պետք ե հրահանգներ դառնան նաև ման-
կական կազմակերպությունների համար:

ՀՈՒՇԱՏԵՏՐ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԽՄԲԱԿՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՐՎԱԾ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ
ԿՈԼԼԵԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Հիշեք, վոր միջազգալին կապի խնդիր-
ներն են.

ա) Ձեր կոլլեկտիվների աշխատանքի փորձն
արտասահմանյան մանկական կոմմունիստական
խմբակներին փոխանցելը.

բ) ԽՍՀՄ մասին բուրժուական գլուխնե-
րում և թշնամական կազմակերպություններում
տարածած ստիռ զրապարտության մերկացումը.

գ) արտասահմանյան պիոներների մեծ ակ-
տիվության զարգացումն իրենց պիոներական
կազմակերպություններում, վորոնք պալքարում
են պրոլետարական յերեխաների աղատագրու-
թյան և լավագույն կյանքի համար:

2. Մի գրեք ամեն բանի մասին միանգա-
մից: Ընտրեք մի հարցը մյուսի յետևից և այն
մշակեցեք խնա լքով ու մանրամասն:

3. Գրեք ինքններդ և գավերացրեք նամակը
կոլլեկտիվի ընդհանուր հավաքում: Դրդեք, վոր
հերթով նամակ գրեն բոլոր ողակները, բոլոր
յերեխաները:

4. Առաջին նամակին կցեք ձեր կոլլեկտիվի
պատմությունը:

5. Փոքրիկ դիագրամմի կամ նկարի ոգնու-
թյամբ ցույց տվեք արտասահմանի պիոներներին
կոլլեկտիվի կառուցվածքը, աճումը և ակ-
տիվությունը:

6. Գրեք պիոներական կոլլեկտիվի կոնկրետ-
առաջադրությունների մասին տվյալ շրջանում—
ձմեռը, ամառը և այլն:

7. Մանրամասն նկարագրեք ճամբարային
կամպանիան, հրապարակի աշխատանքները,
եքսկուրսիաները, գլուղի աշխատանքները:

8. Գրեք լսորհրդային դպրոցների և մանկատների մասին.—Փորձուատերի, ինքնավարության, պատի լրագրի, տաք նախաճաշեր կազմակերպելու, խմբերի, անկազմակերպ յերեխաների մեջ կատարվող աշխատանքի մասին և այլն:

9. Գրեք լեռեխաների փոխհարաբերության մասին հասակավոր ընկերների հետ.

ա) կոլեկտիվում՝ առաջնորդի և մյուս կոմյերիտականների հետ.

բ) կուսակցական բջիջում՝ կուսակցության անդամների հետ.

գ) դպրոցում՝ ուսուցիչների հետ.

դ) մյուս հիմնարկություններում՝ Խ. Հ. Հ. Պ. Պային Միության հասակավոր քաղաքացիների հետ:

10. Մանրամասն նկարագրեք հոկտեմբերիկների խմբակի աշխատանքը, պատմեցեք, թե ինչպես ե մասնակցում նա պիոներական կոլեկտիվի ընդհանուր աշխատանքին:

11. Հստ հնարավորության նամակին կցեք պատի լրագիր, հուշատետր, ձեր կոլեկտիվի կլանքի ու աշխատանքի վերաբերյալ նկարներ:

12. Այսն մի նամակին կցեք ճշգրիտ ու մանրամասն հասցե:

13. Նամակ ուղարկեք միայն այն կողմը, վոր ամրացված ե ձեր նախանդին: Կապ հաստատելով՝ մի խղեք այն:

14. Հստ հնարավորության նամակները տեղերում թարգմանեցեք ոտարերկրյա լեզուների և այն ուղարկեցեք կենտրոնական Պիոներկարինետի, Ոտարերկրյա Բաժնի միջոցով,— Մուկվա, Կитайский проезд, №3, под'езд 12; Այստեղից դուք կստանաք արտասահմանաւագուշակ և նրա հետ մշտապես գրագրություն կունենաք:

15. Հիշեք, վոր արտասահմանից ստացած նամակը ե ոգտագործել: Այն քննության առեք ընդհանուր հավաքում, տվեք պատի լրագրին, նամակի պատճենն ուղարկեցեք տեղագրին, նամակի պատճենն ուղարկեցեք տեղական մանկական ժուրնալին կամ թերթին: Պատմեք ստացած նամակի մասին կոմյերիտամիութենական բջիջում և տանը:

Յորպոստի միջոցով ծանոթացրեք նամակին ամբողջ դպրոցը և բոլոր անկազմակերպ լեռեխաներին:

Համեմատես կե կից Պատանի Պիոներների
կենտրոնական Բյուրո

Ց Ո Ւ Ց Ա Կ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ.

Անգլիա. — Պատանի Ընկերների Միու-	
թյուն (Յանդ Կոմքեյդս Լիյդ) մոտ 1,000 անդ.	
Գերմանիա. — Պատանի Սպարտական-	
ների Միություն (Յունգ Սպարտա-	
կուս Բունդ 13,500 »	
Հ. Ա. Մ. Ն. — Ամերիկայի Պատանի	
Պիոներների Միություն (Յանդ	
պայոնիրս ոֆ Ամերիկա) . . . 3,000 »	
Արգենտինա. — Մանկական Կոմմունիս-	
տական Խմբակներ (Լյաս Ազըռ-	
նացիոնես Ինֆանտիլես Կոմմու-	
նիստաս) 700 »	
Ուրուգվայ. — Ուրուգվայի Կոմմունիս-	
տական Յերեխաների Կազմակեր-	
պություն (Լյա որգանիզացիոնես	
ինֆանտիլե Կոմմունիստա դել	
Ուրուգվայ 400 »	

Չիլի. — Պատանի Պիոներների Միու-	
թյուն 500 անդ.	
Չինաստան. — Մանկական Խմբակներ	
մոտ 10,000 »	
Փրանչիա. — Ֆրանսիայի Բանվորա-	
Գյուղացիական Յերեխաների Ֆե-	
դերացիա (Յեղերասիոն դե զան-	
ֆան. Ուվրիե և Պէզան . . . 3,000 »	
Փինլանդիա. — Կազմակերպված Բանվո-	
րական Յերեխաների Միություն 3,500 »	
Շվեդիա. — Բանվորական Յերեխաների	
Միություն (դեր Բունդ դեր Ար-	
բետեր Բարնենդեր) 1,000 »	
Նորվեգիա. — Պատանի Պիոներների	
Միություն (Նորվեգիեր Պիոներներ	
Բունդ) մոտ 3,000 »	
Շվեյցարիա. — Բանվորական Մանկա-	
կան Խմբակների Միություն (դեր	
բանդ դեր Արբայտերկինդերգրուպ-	
պեն) մոտ 250 »	
Դանիա. — Պատանի Պիոներների Միու-	
թյուն (Ունգե Պիոներեր) . . . 50-75 »	
Կանադա. — Կանադալի Պատանի Պիո-	
ներների Միություն (Յանդ Պայո-	
նիրս ոֆ Կանադա) 700 »	
Սովորլիա. — Պատանի Պիոներների Միու-	
թյուն. 700 »	

Կորեա. — 16	մանկական	խմբակ	ազա-
տության	պայքարի	համար	(անլե-
գալ խմբ.)	մոտ	.	60 անդ.
Հնդկական. — (Կոմմունիստական	կու-		
սակցության	ղեկավարության	տակ	
գտնված դպրոցական աշակերտներ)	3,000		»
Լինաստան. — Պատանի	Պիոներների		
Միություն (Զմյունգեկ սլաղելս			
պիոներուց)	մոտ	.	500 »
Ավստրիա. — Կարմիր Պիոներների Միու-			
թյուն (Ֆերբանդ գեր յունգ ոռու-			
տեն Յունգպիոներեն)	500		»
Չեխո-Սլովակիա. — Չեխո-Սլովակիայի			
Պատանի Պիոներներ (Յունգե Պիո-			
ներե)	ավելի քան	.	1,000 »
Մեր ազգեցության տակ. — Սպորտային			
կազմակերպություն մոտ	.	30,000 »	
(նրանցից մոտ 5,000 «Աշխատան-			
քի Սկաուտներից):			
Հոլլանդիա. — Կոմմունիստական Ման-			
կական Խմբակներ (Կոմմունիստիկ			
կինդերգրուայ)	300		»
Մեքսիկա. — Կարմիր Պիոներների Միու-			
թյուն (Պիոներոս Ռոյոս դե Մեք-			
սիկո)	150		»

ԱՐՏԱՍՍԱՀՄԱՆԻ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ ՅԵՎ
ԺՈՒՐՆԱԼՆԵՐԸ

(Տիրաժների մասնաճումով)

Անգլիա. — «Պատանի ընկեր» (Յանգ Կոմբեյթ)	5,000
Գերմանիա. — «Բայբուկ» (Դի Տրումմել)	20,000
Հ. Ա. Ս. Ն. — «Պատանի ընկեր» (Յանգ Կոմբեյթ)	5,000
Արգենտինա. — «Փոքրիկ ընկեր» (Կոմ-	
պաներիտո)	մոտ 5,000
Ուրուգվայ. — «Պիոներ» (Ել Պիոներ)	1000
Չիլի. — «Հառաջ» (Վոչ պարբերական)	2,000
Չինաստան. — «Կերջերս Գոմինդանն սկը-	
սեց չինարեն մի ժուրնալ հրա-	
տարակել	
Փրանսիա. — «Պատանի ընկեր» (Լե-Ժոն	
Կամբագ)	6,000
Փինլանդիա. — «Կարմիր դրոշ» (Պունալիպպու)	2,000
Շվեդիա. — «Պատանի ընկեր» (Դեն-Ռունդե	
Կամբատեն)	մոտ 3,000
Նորվեգիա. — «Պիոներ» (Պիոներեն)	մոտ 2,000

Շվեյցարիա. — «Պատանի ընկեր» (Դեր Յունգե Գենուսսե)	3,000
Դանիա. — «Պիոներ» (Պիոներեն) վոչ պար- բերական	1,000
Հանգար. — «Պատանի ընկեր» (Յանգ Կոմ- բերի) տպագրվում եւ միմեոգրաֆով . . .	
Մոնղոլիա. — «Փոխ»	
Լիհաստան. — Ռոտատորով տպվում եւ ընդհատակյա լրագիր յերեք լեզու- ներով՝ լեհերեն, հրեարեն և բելո- ռուսերեն	
Չեխո-Ալովակիա. — «Պիոներ» (Դեր Յուն- գե Պիոներ) գերմաներեն	
Չեխո-Ալովակիա. — «Աքաղաղ» (Կոկու- տոկ) չեխերեն	3,000
Խոտալիա. — Բնդհատակյա լրագիր. առա- ջին համարը լուս տեսավ 1927 թ. հունվարին:	
Հոլլանդիա. — «Պատանի ընկեր» (Դե Իոն- գո Կամերադե)	1,500
(Տվյալներն անցյալ տարվանն են: Հայտնի չե արդիոք աժմ գոյություն ունի թերթը)	

ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԻ ԹԻՎԸ.

Բոլոր յերկրներում մանկական կոմմունիստական շարժումն իր ճանապարհին հանդիպելու յե ահագին, մասսայական մանկական կազմակերպությունների, վորոնք գտնվում են մասամբ անմիջականորեն բուրժուազիայի ղեկավարության տակ, մասսամբ ել սոցիալիստական կուսակցությունների, քրիստոնյայական կազմակերպությունների և այլն ղեկավարության տակ: Թե ինչ չափով են ալդ հակառակորդ կազմակերպություններն ընդգրկել պրոլետարական յերեխաներին, բավականաչափ յերեռում են ներքերերվող թվանշաններից (վորոնք, սակայն, բավականաչափ լրեվ չեն):

Անգլիայում կա մոտ 500,000 սկառուտ (այս տեղ մտնում են և տղա, և' աղջիկ, ինչպես նրանց անվանում են, բոյ- և գլոր-սկառուտներ), կիրակնորյա սոցիալիստական դպրոցներ սոցիալիստների ղեկավարությամբ, վորոնցում կան միքանի հազար յերեխա:

Վերջապես, կան միլիոնական և մին-

նույն ժամանակ կրոնական կազմակերպություններ—կաղետներ, յերիտասարդ բրիգադ, և Պատանի Բրիտանացիների Միություն—25.000:

Ամերիկայում—1,250,000 բոյ-սկառուտ և միքանի հարյուր հազար գըրլ-սկառուտ, յերիտասարդության բուրժուական ակումբներ քաղաքում և գյուղում, ապա սոցիալ-դեմոկրատական խթակներ և «Ամերիկայի Պատանի Պիոներներ» նոր կազմակերպությունը սոցիալիստների ղեկավարությամբ: Բացի այդ, այստեղ կան սկառուտական տիպի շատ մանկական կազմակերպություններ, վորոնք չեն մտնում սկառուտական ընդհանուր միության մեջ:

Չինաստանում—10.000 սկառուտ՝ Յերիտասարդների Քրիստոնեյական Միության ղեկավարությամբ:

Յապոնիայում—317.563 սկառուտ (ըստ պաշտոնական հաշվետվությունների):

Դերմանիայում—գերմանական սպորտալին միություն մանկական բաժանմունքով, վոր 1926թ. հունվարին 352 189 անդամ ուներ: Քրիստոնեյական մանկական խթակները կազմակերպված են յեկեղեցական ծխերով: Շաբաթը մեկ անգամ, սովորաբար կիրակի որերը, տերաբերները նրանց հավաքում են ըստ իրենց ծխերի: Ապա կան այսպես կոչված «Պֆաղ-պֆիդերներ» (գերմա-

նական սկառուտներ), ապա—մանկական բաժանմունքներ յերիտասարդության ֆաշիստական կազմակերպություններին կից և «չեղոք» միություններ ամեն տեսակ զվարճությունների համար, առավելապես դպրոցներին կից: «Կինդերլանդ» մանկական խմբակներ Ոտտո Ռյուլե հայտնի մանկավարժի ղեկավարությամբ: Սոցիալ-դեմոկրատական մանկական խմբակներ (մինչև 200 խմբակ): Ապա կան մի շարք սպորտային միություններ, վորոնք մտնում են Լյուցերնի Սպորտ ինտերնացիոնալը սոցիալ-դեմոկրատների ղեկավարությամբ: Ալդ միությունների մի մասն արդեն գտնվում է մեր ազգեցության տակ.

Ավստրիայում—կան բուրժուական և սոցիալիստական սկառուտական կազմակերպություններ: Սոցիալիստական սկառուտները մոտ 15 հազար հոգի յեն: Ապա կան սոցիալ-դեմոկրատական սպորտային կազմակերպություններ մանկական բաժանմունքով, վորոնց մեջ մտնում են մինչև 40.000 յերեխա: «Յերեխաների Բարեկամներ» ծնողական խմբակներին կից գտնվող յերեխաների սոցիալ-դեմոկրատական խմբակները մըշտապես ալցելում են 15-20 հազար յերեխա: Նրանցից մոտ 5 000 մանուժ են «Կարմիր Բազե» նոր կազմակերպությունը, իսկ մեծ առներին ալդ բոլոր խմբակները հաճախում են մոտ 100.000 յերեխա:

Չեխո-Սլովակիայում — սպորտային-ազգայ-նական «Բազե» կազմակերպության մեջ կան 215.448 յերեխա: Դրանք 14 տարին չլրացրած յերեխաներ են: Ապա «Արծիվ» կրօնական կաղ-մակերպության մեջ — 36868 յերեխա: Բանվո-րական մարմնամարզական ընկերությունների միության մեջ — 8,000: Այդ սոցիալ-դեմոկրա-տական կազմակերպություն ե: Ապա գերմանա-կան ազգային միության մեջ (ս..դ.) — 30,000: Ապա «Յերեխաների Բարեկամերը» — նույնպես սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն են: Կան բուրժուական սկառատական կազմակերպու-թյուններ, վորոնց մեջ են ավելի մեծ հասակի տղաներ, մինչև 20 տարեկան: Վոքը յերեխա-ները, մինչև տասնչորս տարեկան, ընդամենը 537 հոգի լեն, մինչև 18 տարեկանը — մոտ 19,000: Կա նաև չեխո-սլովակյան սկառատների ֆեդե-րացիա: Այս խմբակները միքիչ ավելի ձախ են նախորդներից, վորոնք ակներևաբար ֆաշիստա-կան բնույթ են կրում: Ֆեդերացիայում կան մինչև 14 տարեկան 1,000 յերեխա, մինչև 18 տարեկան՝ 4,000: Բացի այդ, դպրոցներին կից կան կառավարությունից պաշտպանություն գլա-նող զանազան մանկական կազմակերպություն-ներ, մասնավորապես «Կարմիր Խաչը»:

Իտալիայում — «Բալլիլա» ֆաշիստական ման-

կական խմբակներն առ 1.ն հունվարի 1926 թ. տեղեկություններով ընդգրկում ելին 269,166 յերեխա և ունեյին 4,058 տեղական սեկցիա: Այժմ նրանցում արդեն կա 1,000,000 յերեխա: Այժմ բոլ-սկառատները միանում են «Բալլիլային»:

Սորվեգիայում — սոցիալ-դեմոկրատական խմբակները, ունեգատ Տրամմելի դեկավարու-թյամբ, ունեն մինչև 3,000 հոգի: Բացի այդ, կան սկառատական և կրօնական կազմակերպու-թյուններ:

Շվեյչայում — կան ուժեղ բոլ-սկառատական և կրօնական կազմակերպություններ:

Փրանսիայում — յերեք ուղղության սկառ-տական կազմակերպություններ՝ կաթոլիկական, բողոքական և «չեղող»: Վորոնք ունեն նույնպես և վոքը յերեխաների, «գայլի ձագերի» քաժան-մունք:

Ահա հիմնական թվանշանները, վոր հնարա-վոր եր հավաքել: Այս թվանշաններն ամենեին չեն ընդգրկում բոլոր կազմակերպությունները, և այժմ մեզ համար դժվար ե ասել, թե ինչքան ե ալդ բոլոր հակառակորդ կազմակերպություն-ների ընդգրկած յերեխաների ճշգրիտ քանակը: Բայց բոլորովին պարզ ե, վոր նրանք ընդգրկում են վոչ թե հարցուր-հազարավոր, այլ միլիոնավոր յերեխաների: Այդ միլիոնների մի ահազին մասը,

կարելի յե ասել, մինչև 70% պըոլետարական
յերեխաներ են:


Այդ բոլոր կազմակերպությունները կարելի
յե բաժանել յերեք հիմնական խմբակի:

Առաջին խմբակը — այդ զուտ բուրժուական
ֆաշիստական կազմակերպություններ են, վո-
րոնք ակներև կոիվ են մզում ամեն տեսակ բան-
վորական շարժման դեմ, լինի այդ հասակավոր-
ների, թե մանուկների շարժում:

Երկրորդ խմբակը — այդ սոցիալ դեմոկրա-
տական և ամեն տեսակ բանվորական կազմա-
կերպություններն են, վորոնք բանվորական
շարժման ձախ թևի դեկավարության տակ չեն:

Երրորդ խմբակը — այսպես կոչված «չեղոք» և կուլտուրական կազմակերպություն-
ներն են, ինչպես, որինակ, սպորտային միու-
թյունը և այլն. Նրանք ակներև վոչ մի քաղա-
քական ցուցանակ չունեն և պաշտոնապես չեն
գտնվում վորեն քաղաքական կազմակերպության
դեկավարության տակ:

Նայած թե վոր խմբակին ե պատկանում
տվյալ կազմակերպությունը, մենք նրանց վե-
րաբերմամբ յուրատեսակ ել տակտիկա պետք ե
ունենանք, ինչպես այդ մատնանշեց մանկական
կոմմոնիտատիկան միությունների դեկավարների
մշակուային ԽՍՀ պոնֆերենցիան:



64

ՀՀ Ազգային գրադարան



NL0187387



ԳԻՒԸ 20 Կ.

Հ

